



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«24» հունիսի 2017 թվականի N 52 ք.Գյումրի

ԳՐԻԳՈՐ ՄԱԴՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Գրիգոր Մադոյանի 2017 թվականի հունիսի 22-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ՝

1. «Ախուրիկի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գրիգոր Մադոյանին տրամադրել 20 աշխատանքային օր ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 2017 թվականի հուլիսի 3-ից 31-ը ներառյալ:
2. Գրիգոր Մադոյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում «Ախուրիկի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ընտանեկան բժիշկ Լենա Մանուկյանին:

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

